ԻՐԱՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԴԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (1991-2003 ԹԹ.)

ՂԱՀՐԻՅԱՆ Մ. Հ.

Իրանա-իրաքյան պատերազմի ավարտից՝ 1988 թ. օգոստոսից ընդամենը 2 տարի անց Սադդամ Հուսեյնը նոր ռազմական արկածախնդրության դիմեց՝ օկուպացնելով հարևան Քուվեյթը: Իրաքն այս քայլի հետևանքով հայտնվեց միջազգային մեկուսացման մեջ, կորցրեց արաբական երկրներ մեծ մասի աջակցությունը: Իրաքյան ռազմական ուժերը, որոնք մինչ այդ թվաքանակով 4-րդն էին աշխարհում, տալով 150.000 սպանված՝ հեռացան Քուվեյթից: Սադդամի անխոհեմ քաղաքականության հետևանքով իրաքյան ժողովուրդը հարյուրհազարավոր զոհեր տվեց ու անթիվ նյութական կորուստներ կրեց[1]:

Քուվեյթի օկուպացիայից ամիսներ անց ԱՄՆ-ի գլխավորությամբ մի շարք երկրների զինված ուժեր 1991 թ. հունվարի 17-ին սկսեցին «Փոթորիկ անապատում» գործողությունը, որի շնորհիվ Քուվեյթն ազատագրվեց իրաքյան ուժերի օկուպացիայից: Կոալիցիայի օդուժը շարքից հանեց իրաքյան ռազմական և քաղաքացիական ենթակառուցվածքները, երկրի զինված ուժերը լուրջ կորուստներ կրեցին:

1980-1988 թվականների իրանա-իրաքյան պատերազմի վերջին փուլում քրդերը ծանրագույն հարվածներ էին ստացել, սակայն, օգտվելով իրավիճակից, 1991 թ. կարողացան նոր ապստամբություն սկսել: 1988 թ. Իրաքի իշխանությունները մի քանի փուլով իրագործել էին «Ալ-Անֆալ» ծրագիրը՝ ցեղասպանության ենթարկելով քուրդ ժողովրդին: Քիմիական զենքի կիրառման, զանգվածային արտաքսման ու քրդական բնակավայրերի ոչնչացման քաղաքականությանը զոհ էր գնացել ավելի քան 100.000 քուրդ, մոտ 2 միլիոն մարդ փախստական էր դարձել[2]:

Քուվեյթում կրած պարտությունից հետո, օգտվելով իրադրությունից, Իրաքի հարավում և հյուսիսում ապստամբեցին շիաներն ու քրդերը: 1991 թ. մարտի 2-ին Նասիրիայում հարձակումներ կազմակերպվեցին կառավարական շենքերի վրա:

Քրդերի ապստամբությունը սկսվեց մարտի 4-ին Ռանիյայում: Դրան միացավ ավելի քան 100.000 մարդ, այդ թվում՝ այն քրդերը, որոնքց նախկինում իրաքյան

---

[1] **Կարապետյան Ռ.,** *Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., 2003, էջ 255:*

[2] *Human Rights Watch. (1993) 'Genocide in Iraq - The Anfal Campaign Against the Kurds.'Available at:http://www.hrw.org/legacy/english/docs/2006/08/14/iraq 13979 _txt.htm*

վարչակարգը օգտագործում էր քրդական ընդվզումները ճնշելու համար[3]: Նույն ամսում քուրդ ապստամբների վերահսկողության տակ հայտնվեցին Դոհուկը, Էրբիլը, Սուլեյմանիեն: Բաաս կուսակցության և անվտանգության ուժերի գրասենյակները հրկիզվեցին, իսկ կուսակցության և հետախուզական ծառայությունների պաշտոնյաները սպանվեցին:

Քրդերի հաջողությունը, սակայն, կարճ տևեց: Հարավում շիաների ապստամբությունը ճնշելուց հետո Սադդամ Հուսեյնն իր ամենամարտունակ զորամիավորումը՝ Հանրապետական գվարդիան, ուղղեց քրդերի դեմ: Մարտի 28-ին Սադդամի զորքերը քրդերին ստիպեցին լքել Քիրքուքը, այնուհետև՝ մյուս խոշոր բնակավայրերը: Մոտ 1.5 միլիոն մարդ նորից լքեց սեփական տները, շարժվեց դեպի Թուրքիայի և Իրանի սահման: Բնակիչների փախուստն ուղեկցվում էր օդային ռմբակոծությամբ, անգամ ֆոսֆորային ռումբերի կիրառմամբ[4]:

Ապստամբության անհաջողության պատճառները տարբեր էին: Իրաքյան բանակի պարտությունն ու շիաների ապստամբությունը, իհարկե, հնարավորություն էին տալիս քրդերին օգտվելու ստեղծված վիճակից և իրենց վերահսկողության տակ վերցնելու քրդական ինքնավարության տարածքը: Քրդական ճակատի առաջնորդները, սակայն, զգուշանում էին ապստամբությունից, քանի որ կառավարությունը կարող էր կրկնել քիմիական զենքով հարձակումները: ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիան իր հերթին երաշխիքներ չէր տվել, որ կաջակցի ապստամբությանը: Այնուամենայնիվ, քրդերի շրջանում առկա խանդավառությունը և կամավորների աճը ստիպեցին քուրդ առաջնորդներին սկսել ապստամբությունը:

1991 թ. ապրիլին մոտ մեկ միլիոն քուրդ ցրտից ու սովից մահացավ Թուրքիայի սահմանի մոտ[5]: Հումանիտար աղետը կանխելու նպատակով 1991 թ. ապրիլի 5-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց թիվ 688 բանաձևը, որով դատապարտվում էին Իրաքի բազմաթիվ վայրերում, ներառյալ քրդաբնակ տարածքներում քաղաքացիական բնակչության հանդեպ ճնշումները: Նշվեց, որ հետևանքները սպառնում են միջազգային խաղաղությանն ու տարածաշրջանում անվտանգությանը, և, ըստ այդմ, պահանջվեց Իրաքի իշխանություններից վերջ դնել այդ ճնշումներին: Բանաձևում կոչ էր արվում ԱԽ անդամ երկրներին ու բոլոր մարդասիրական կազմակերպություններին աջակցել Իրաքում մարդասիրական

---

[3] **Jabar F.** *Why the Uprising failed, http://www.merip.org/mer/mer176/why-uprisings-failed*

[4] **McDowall D.** *A Modern History of Kurds (3rd Rev. and Updated ed.), London, 2004, p. 373.*

[5] **Anderson L., Stansfield G.** *The Future of Iraq: Dictatorship, Democracy, or Division?, New York, 2004, p. 89.*

ջանքերին[6]: Այս բանաձևը պատմական է երկու առումով. ՄԱԿ-ի բանաձևերում քրդերն առաջին անգամ նշվում էին իրենց անունով. դա նշանակում է նրանց կարգավիճակի միջազգայնացում, ինչպես նաև առաջին անգամ իրավունք էր տրվում միջամտություն իրականացնելու կազմակերպության անդամ երկրում[7]: Բանաձևի հիման վրա 36-րդ զուգահեռականից հյուսիս ընկած տարածքները հայտարարվեցին անթռիչք գոտի: ՄԱԿ-ն Իրաքի դեմ տնտեսական պատժամիջոցներ սահմանեց:

Ապստամբությունը ճնշելուց հետո Իրաքի կառավարությունը կոչ արեց ՔԴԿ-ին ու ՔՀՄ-ին համատեղ պատվիրակություն ուղարկել Բաղդադ: Բանակցությունների ընթացքում 4 նախագիծ ներկայացվեց ժողովրդավարության ու մարդու իրավունքների, ինքնավարության, անվտանգության, ազգային միասնության վերաբերյալ: Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթով քրդերը պահանջում էին, որ քաղաքական համակարգի վրա Բաասի մենաշնորհ վերահսկողությանը վերջ դրվի, հայտարարվի կուսակցության և պետության տարանջատման մասին: Քաղաքական և մամուլի ազատությունները պետք է երաշխավորվեն, նոր սահմանադրության ընդունման համար հանրաքվե անցկացվի[8]:

Ինքնավարության և սահմանների վերաբերյալ քննարկումների ժամանակ քրդերը պնդում էին, որ անվտանգության պատասխանատվությունը պետք է քրդերին հանձնվի, իսկ Խանակինի, Մանդալիի և Քիրքուքի շրջանները ճանաչվեն քրդական տարածքի մաս: Հարաբերությունների կարգավորման մասին փաստաթղթում քրդերը կոչ էին անում վերջ դնել արտաքսման և արաբականացման քաղաքականությանը, վերակառուցել ավերված քաղաքներն ու գյուղերը: Կառավարությունը պատասխանեց, որ արաբականացման քաղաքականությունը չի վերաբերելու ինքնավար շրջանի կազմում գտնվող տարածքներին, սակայն չի դադարեցվելու դրա սահմաններից դուրս, մասնավորապես խառը բնակչությամբ Քիրքուքում և Խանակինում: Վերջին՝ 4-րդ փաստաթղթով կողմերը համաձայնության եկան ազգային միասնության ու Իրաքի տարածքային ամբողջականության ամրապնդման անհրաժեշտության շուրջ՝ դա-տապարտելով անջատողականությունը[9]:

---

[6] Security Council Resolutions, Resolution 688, 5 Apr, 1991, http://www.un.org/Docs/scres/1991/scres91.htm

[7] McDowall D., նշվ. աշխ.,էջ 375:

[8] Khadduri M., Ghareeb E. War in the Gulf 1990-91, New York, 1997, p. 208.

[9] Նույն տեղում, էջ 209:

Քրդերն առավել քան երբևէ վայելում էին միջազգային հանրության համակրանքն ու աջակցությունը և միաժամանակ բանակցում թուլացած Իրաքի կառավարության հետ: Քուրդ առաջնորդները հավատում էին, որ չպետք է կորցնել լիակատար ինքնավարության հասնելու հնարավորությունը Բաղդադի հետ ուղղակի բանակցությունների միջոցով, այլ ոչ թե տարածաշրջանային երկրների կամ միջազգային միջամտությամբ, որովհետև արտաքին աջակցությունից մեծ կախվածության պատճառով քրդերը բազմիցս հիասթափություն են ապրել:

Նոր պայմաններում, բանակցությունների ձախողումից հետո, Սադդամի վարչակարգը ձգտում էր կաթվածահար անել Հյուսիսային Քրդստանի կառույցների աշխատանքը: Քրդստանից հետ կանչվեցին բոլոր մասնագետներն ու պաշտոնյաները[10]: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր իշխանության նոր կառույցներ ստեղծել:

1992 թ. ապրիլի 8-ին Հարավային Քրդստանի ճակատի ղեկավարությունն ընդունեց խորհրդարանական ընտրությունների անցկացման կանոնակարգը: Նույն թվականի մայիսի 19-ին կայացած ընտրություններից հետո Մասուդ Բարզանիի Քրդստանի դեմոկրատական կուսակցությունն ստացավ ձայների 45.26%-ը, իսկ Ջալալ Թալաբանիի Քրդստանի հայրենասիրական միությունը՝ 43.8%-ը: ՔԴԿ և ՔՀՄ կուսակցություններից յուրաքանչյուրը պայմանավորվածությամբ ստացավ 50 մանդատ, ևս 5 մանդատ էլ ստացան փոքրամասնությունները[11]: Նույն օրն անցկացված նախագահական ընտրություններում թեկնածուներից ոչ ոք չհավաքեց ձայների կեսից ավելին, սակայն երկրորդ փուլ այդպես էլ չանցկացվեց, և Իրաքյան Քրդստանը մնաց առանց նախագահի, որովհետև քուրդ երկու առաջնորդներից ոչ մեկը չէր ցանկանա պարտվողի դերում լինել: Փոխարենը ստեղծվեց 8 հոգուց բաղկացած Գերագույն կոմիտե, որում ներառվեցին Բարզանին, Թալաբանին և 3-ական ներկա-յացուցիչ ՔԴԿ-ից ու ՔՀՄ-ից[12]: Նորընտիր խորհրդարանը 1992 թ. հիմնադրեց Քրդստանի տարածաշրջանային կառավարությունը՝ Իրաքյան Քրդստանի ղեկավար մարմինը:

Խորհրդարանական ընտրություններն ու ՔՏԿ-ի ստեղծումը քրդերի պատմության կարևորագույն էջերից են: Քրդական խորհրդարանը ժողովրդա-վարությամբ ընտրված առաջին քրդական պետական ինստիտուտն էր, որը ճանաչվեց միջազգայնորեն: 1991- 1992 թթ. իրադարձությունների հետևանքով

---

[10] **Мгои Ш.** *Политические изменения в Южном Курдистане после кон-фликта в Персидском заливе (Южный Курдистан сегодня, сборник статей, М., 1997, с. 22).*

[11] **Stansfield G**. *Iraqi Kurdistan Political Development and Emergent Democracy, London, 2003, p. 129.*

[12] **Katzman K., Prados A.** *CRS Report for Congress, The Kurds in Post-Saddam Iraq, Washington, 2005, p. 3.*

քրդական շարժումը փոխակերպվեց՝ պարտիզանական շարժումից վերածվելով ինստիտուցիոնալ կառույցի: Սա բաասական վարչակարգի առաջին խոշոր պարտությունն էր քրդական հարցում: Հաղթելով 1991 թ. բանակցությունները քրդերի հետ և դաժանորեն ճնշելով ապստամբությունը՝ Սադդամը ռազմավարական խոշոր սխալ թույլ տվեց: Քրդերի նոր կոտորածը կանխելու համար ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան Իրաքի հյուսիսում անվտանգության ու անթռիչք գոտիներ ստեղծեցին, որի պատճառով Իրաքի իշխանությունը չէր կարող իր զորքերը տեղակայել սեփական տարածքում:

Իրաքի դեմ ՄԱԿ-ի ընդունած պատժամիջոցները Սադդամ Հուսեյնը որպես գործիք սկսեց կիրառել քրդերի դեմ: Քրդական ինքավարության տարածքը կրկնակի պատժամիջոցների տակ էր՝ մի կողմից ՄԱԿ-ի, մյուս կողմից՝ վարչակարգի: Սադդամ Հուսեյնը շրջափակման էր ենթարկել Իրաքյան Քրդստանը: Նա քրդերի դեմ տնտեսական պատերազմ էր սկսել, որի նպատակն էր սեղմել օղակը և վերջնականապես հյուծել քրդերին, որպեսզի վերջիններս ըն-դունեն Բաղդադի պահանջները: 1992 թ. օգոստոսին շրջափակումն արդեն ամբողջական էր: Հուլիսին Իրաքի ղեկավարությունն ար-գելել էր վառելիքի մատակարարումը, որի հետևանքով կերոսինը թանկացավ 200 անգամ[13]: Սուլեյմանիեն ստանում էր անհրաժեշտ սննդամթերքի ընդամենը 20%-ը, իսկ Էրբիլը՝ 16%-ը: Իրավիճակը փոքր-ինչ բարելավվեց միայն 1994 թ.: Իրաքյան քրդերի համար ծանր հարված էր հացահատիկի մաքսանենգությունը, որի արտա-հանման վրա արգելք էր դրված: 1992 թ. 200.000 տոննա հացա-հատիկի բերք էր հավաքվել: Դա կարող էր բավարարել քրդական պահանջարկի կեսը, սակայն դրա մեծ մասը մաքսանենգ ճանապարհով անհետացել էր[14]:

Տնտեսական շրջափակմանը գումարվեց քաղաքական անկայունությունը բուն Իրաքյան Քրդստանում: ՔԴԿ-ն և ՔՀՄ-ն ընտրությունների միջոցով իշխանություն էին ձևավորել, սակայն դա ոչ թե նպաստեց կայունության հաստատմանը, այլ ընդհակառակը: Երկու ուժերը միմյանց միջև բաժանեցին ինքնավարության տա-րածքը: Միասնական մայրաքաղաքի փոխարեն գոյություն ուներ երկու կենտրոն՝ ՔԴԿ-ի համար՝ Էրբիլը, ՔՀՄ-ի համար՝ Սուլեյմանիեն: ՔՀՄ-ն ՔԴԿ-ին մեղադրում էր սահմանային անցակետերում հավաքված մաքսատուրքերը յուրացնելու մեջ: Թուրք-իրաքյան սահմանին գտնվող Իբրահիմ Խալիլ անցակետից օրական 100-250

[13] McDowall D., *նշվ. աշխ.,էջ 382:*
[14] *Նույն տեղում, էջ 383:*

հազար ԱՄՆ դոլարի մաքսատուրք էր հավաքվում՝ քրդական շրջանի ընդհանուր մաքսատուրքերի 75%-ը[15]:

Տարաձայնություններն ու փոխադարձ անվստահության աճն ի վերջո հանգեցրին զինված բախումների, որոնք սկսվեցին 1994 թ. մայիսին հողային փոքր վեճից: Տեղային բախումներն աստիճանաբար վերածվեցին քաղաքացիական պատերազմի: Սկզբնական շրջանում հաջողությունը Ջալալ Թալաբանիի՝ ՔՀՄ-ի կողմն էր: 1996 թ. ՔՀՄ փեշմերգան գրավել էր քրդական ինքնավարության տարածքի մեծ մասը, այդ թվում՝ Էրբիլ և Սուլեյմանիե քաղաքները: Մասուդ Բարզանիի իշխանության տակ էր մնացել միայն Թուրքիայի հետ սահմանակից Դոհուկի շրջանը: Հարկ է նշել, որ ՔՀՄ-ին օգնում էր Իրանը, իսկ Թուրքիայի համակրանքը ՔԴԿ-ի կողմն էր: Վերջինս աջակցություն էր ստանում նաև Սադդամ Հուսեյնից. 1994 թվականից Բարզանին գաղտնի շփումների մեջ էր Բաղդադի հետ, որի շնորհիվ հրետանային զինատեսակներ էր ստանում:

1996 թ. օգոստոսին Բարզանին արդեն բացահայտ դիմեց Բաղդադին, որովհետև ծանր վիճակում էր հայտնվել: Սադդամ Հուսեյնն անմիջապես զորք ուղարկեց Քրդստան, որը ՔԴԿ փեշմերգայի հետ միասին կարճ ժամանակում հետ գրավեց ՔՀՄ-ի վերահսկողության տակ գտնվող տարածքները: Այս քայլով Իրաքի իշխանությունները միանգամից երկու հարց լուծեցին՝ զորք մտցրեցին 36-րդ զուգահեռականից հյուսիս ընկած տարածքներ և ձերբակալեցին, վե-րացրին ռեժիմի հարյուրավոր հակառակորդների, որոնք ապաստան էին գտել Քրդստանում:

Ի պատասխան իրաքյան ուժերի գործողությունների՝ ԱՄՆ-ն սպառնաց ընդլայնել անվտանգության գոտին և հարվածներ հասցրեց երկրի հարավում գտնվող օբյեկտներին: Դրանից հետո Ս. Հուսեյնը հրամայեց հետ քաշել զորքերը:

Մասուդ Բարզանին Հուսեյնին դիմելու քայլն արդարացնում էր՝ նշելով, որ այն մեկանգամյա բնույթ ուներ, նպատակն էր ազատագրել Էրբիլը ՔՀՄ-ի ջոկատներից և առանց որևէ պարտավորությունների էր: Մ. Բարզանին նշում էր, որ որևէ փաստաթուղթ չի ստորագրել Իրաքի նախագահի հետ[16]:

Թուրքիայի, ԱՄՆ-ի և մի շարք այլ երկրների միջնորդությամբ Անկարայում, Փարիզում, Դրոգեդայում, Թեհրանում, Վաշինգտոնում հանդիպումներ կազմակերպվեցին հակամարտող կողմերի միջև: Քրդական երկու առանցքային ուժերի պատերազմն ավարտվեց 1998 թ. Վաշինգտոնում ԱՄՆ-ի միջնորդությամբ ձեռք բերված համաձայնության շնորհիվ: ԱՄՆ-ի համար Քրդստանում կայու-

---

[15] Шахбазян Г. *Межкурдский конфликт в Южном Курдистане (Южный Курдистан сегодня, сборник статей, М., 1997, с. 40).*

[16] Шахбазян Г., *նշվ. աշխ. с. 41-42.*

նությունը կարևոր նշանակություն ուներ, քանի որ այն դիտարկվում էր որպես հարթակ Ս. Հուսեյնին տապալելու համար:

Վաշինգտոնյան համաձայնությունը ձեռք բերվեց դեռևս 1996 թ. Անկարայում բանակցված կետերի հիման վրա: Անկարայի համաձայնագրով սահմանվում են ՔԴԿ-ի և ՔՀՄ-ի ազդեցության գոտիները, կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է իր զինված ուժերն օգտագործել միայն պաշտպանվելու նպատակով, կուսակցությունների միջև ծագած վեճերի լուծմամբ պետք է զբաղվի հատուկ հանձնաժողովը: Կողմերը պարտավորվում են նաև գերիների, վիրավորների ու զոհվածների մարմինների փոխանակում կատարել, միասին վերականգնել ենթակառուցվածքները, մաքսային եկամուտները պետք է հավաքվեն միասնական կենտրոնի կողմից և հավասար բաշխվեն Իրաքյան Քրդստանի ամբողջ տարածքում: Համաձայնության կետերի իրականացումը պետք է հսկեն միջազգային դիտորդները: Վաշինգտոնում ընդգծվում է հետագա բախումներից խուսափելու և քրդերի վերահսկողության տակ գտնվող տարածքներ իրաքյան զորքերի վերադարձը կանխելու Իրաքի քրդերի ցանկությունը[17]:

Վաշինգտոնի համաձայնագիրն օգնեց Իրաքյան Քրդստանում համեմատաբար կայունություն հաստատել: 1996 թ. ՄԱԿ-ն ըն-դունել էր «Պարեն նավթի դիմաց» ծրագիրը, որով Իրաքից արտահանվող սահմանափակ ծավալով նավթի դիմաց սնունդ և քաղաքացիական կարիքների համար անհրաժեշտ այլ ապրանքներ էին ուղարկվում Իրաք[18]: Ըստ ծրագրի՝ այդ միջոցների 13%-ն ուղղվում է Իրաքյան Քրդստան: Ծրագրի սկզբնական փուլում Իրաքի քրդական նահանգները մեկ շնչին բաժին ընկնող ցուցանիշով 35% ավելի շատ օգնություն էին ստանում, քան երկրի մյուս հատվածներում[19]:

1998 թ. հոկտեմբերի 31-ին ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը ստորագրեց Իրաքի ազատագրության ակտը, որով հռչակվում էր Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնին իշխանությունից հեռացնելու և Իրաքում ժողովրդավարական կառավարում հաստատելու մտադրությունը: Ծրագրվում էր իշխանափոխությունն իրականացնել իրաքյան ընդդիմադիր ուժերի միջոցով[20]: Վաշինգտոնն այդ ուժերի շարքում տեսնում էր նաև ՔՀՄ-ին և ՔԴԿ-ին:

---

[17] **Makovsky A.** *Kurdish Agreement Signals New U. S. Commitment, http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/kurdish-agreement-signals-new-u.s.-commitment, Sep. 29, 1998.*

[18] النفطمقابلالغـــــــــذاء, *http://www.un.org/arabic/depts/oip/background/indexA.html*

[19] **Natali D.** *The Kurdish Quasi-State, New York, 2010, p. 53.*

[20] *See US 105th Congress, "Iraq Liberation Act of 1998", Public Law 105-338, 112 Stat. 3178, October 31, 1998.*

ԱՄՆ-ն մի քանի տարի շարունակ աշխատանք էր տանում վարչակարգին ընդդիմադիր իրաքյան ուժերի միջև համագործակցություն հաստատելու համար: 2002 թ. հունիսին ՔՀՄ-ի և ՔԴԿ-ի ներկայացուցիչներն իրաքյան ընդդիմադիր այլ ուժերի հետ քննարկումների էին մասնակցում Իրաքի դեմ ամերիկյան ռազմական գործողությունների ժամանակ ընդդիմության գործողությունները համակարգելու համար: 2002 թ. հոկտեմբերին Էրբիլում տեղի ունեցավ քրդական խորհրդարանի համատեղ նիստ: ՔԴԿ-ն և ՔՀՄ-ն պայմանավորվեցին միասին աշխատել նախքան նոր ընտրությունների անցկացումը[21]:

Ամփոփելով Իրաքի դեմ երկու պատերազմների միջև ընկած տասնամյակը՝ կարող ենք եզրակացնել, որ չնայած բազմաթիվ դժվարությունների՝ քրդերը կարողացան հանգամանքներն օգտագործել իրենց օգտին և միջազգայնորեն ճանաչված ինքնավարություն ձևավորել: Դրան մեծ մասամբ նպաստեց Իրաքի իշխանությունների վարած անհաջող ներքին քաղաքականությունը՝ հիմնված բիրտ ուժի կիրառման և միջազգային հանրության անտարբերության ակնկալիքի վրա: Այդ հաշվարկները չարդարացան, Բաղդադը կորցրեց իշխանությունը քրդաբնակ հյուսիսում, որտեղից էլ 2003 թ. ապրիլին ամերիկացիները երկրորդ ճակատը բացեցին իրաքյան պատերազմում:

ПОЛИТИКА ИРАКА В ОТНОШЕНИИ КУРДОВ (1991-2003 ГГ.)

ГАГРИЯН М. А.

Резюме

В 1990 году президентом Ирака Саддамом Хусейном были начаты военные действия в Кувейте. Через год, в 1991 г., Международной коалицией, возглавляемой США, Кувейт был освобожден. Во время отступления иракских войск курды подняли новое восстание, и в результате была освобождена территория Иракского Курдистана. Вскоре войсками Саддама Хусейна восстание было подавлено. Совет безопасности ООН принял резолюцию N688, согласно которой была установлена бесполетная зона в целях обеспечения безопасности курдов.

Эти действия позволили курдским политическим партиям провести парламентские и президентские выборы и сформировать государственные органы. После провала переговоров между Багдадом и Эрбилем правительство Ирака организовало блокаду региона. Тем

[21] *BBC, Iraqi Kurdistan Profile-timeline, http://www.bbc.com/news/world-middle-east-15467672*

временем в Иракском Курдистане вспыхнула гражданская война между главными партиями. Президент ДПК Масуд Барзани обратился за помощью к Саддаму Хусейну, и иракские войска были введены в ИК. При посредничестве США и других государств было достигнуто мирное соглашение между курдами, а программа «Нефть в обмен на продовольствие» помогла восстановлению ИК. Таким образом ситуация в курдском регионе стабилизировалась.

IRAQI POLICY TOWARDS THE KURDS (1991-2003)

M. GHAHRIYAN

Abstract

In 1990 Saddam Hussein, the President of Iraq, launched a military campaign against Kuwait. In 1991 the US-led coalition liberated the tiny country and forced Iraqi military to retreat. The Kurds started a new rebellion and liberated the territory of Iraqi Kurdistan. Later Saddam's army defeated the Kurdish Peshmerga. In order to guarantee the security of the Kurds, the UN Security Council adopted Resolution N688, and no-fly zone was established north to 36th parallel. This measure allowed the Kurdish parties to hold parliament and presidential elections for the first time.

After the failure of the negotiations between Baghdad and Erbil the Iraqi government imposed a blockade on Kurdish region. Besides, a war broke out between KDP and PUK. In 1996 Masud Barzani asked Saddam Hussein for an intervention. The government troops invaded the region violating the conditions of UNSCR 688.

The United States and other countries brokered a ceasefire, Washington accords were signed, the civil war ended. The Oil for Food Program helped to recover the economy. The situation in Iraqi Kurdistan gradually stabilized.